Նախագիծ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

___ «_____» 2024թ. N -Ն

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 12-ի N 95-Ն ՈՐՈՇՄԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՍԵՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասով՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. Կասեցնել Երևան քաղաքի ավագանու 2024 թվականի մարտի 12-ի N 95-Ն որոշման գործողությունը մինչև 2026 մարտի 1-ը՝ հնարավորություն ստեղծելով 2025 թվականի ուղեվարձի վճարումների տվյալների հիման վրա պարզել տրանսպորտի ուղեվարձի ինքնարժեքը:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Երևան քաղաքի ավագանու
«Մայր Հայաստան» խմբակցության ղեկավար՝ Մանուկ Սուքիասյան

ՏԵՂԵԿԱՆՔ-ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ
«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 12-Ի N 95-Ն ՈՐՈՇՄԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՍԵՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Սույն նախագծով առաջարկվում է կասեցնել Երևան քաղաքի ավագանու 2024 թվականի մարտի 12-ի N 95-Ն որոշման (այսուհետ՝ N 95-Ն որոշում) գործողությունը՝ ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասով, քանի որ տրանսպորտի ուղեվարձի հստակ ինքնարժեք դեռ չի արձանագրվել:

Երևան քաղաքի ավագանու 2024 թվականի մարտի 12-ի N 95-Ն որոշումն ուժի մեջ է մտել 2025 թվականի փետրվարի 1-ից, ինչի ընթացքում մի քանի անգամ փոփոխություններ և լրացումներ են կատարվել որոշման մեջ սակագների և արտոնությունների մասով: Վերջին փոփոխություններով վերը նշված որոշման մեջ, ի թիվս այլնի, որպես առանձին սակագին ավելացվել է 150 դրամը՝ տեղի տալով հանրային լայն դժգոհությանը: Վերը նշված ժամանակահատվածում որևէ անգամ չի արձանագրվել՝ որն է տրանսպորտի ուղեվարձի հստակ ինքնարժեքը, ինչը խնդրահարույց է տրանսպորտի ուղեվարձի սակագին սահմանելու համար:

Ուստի այս նախագիծը հնարավորություն կտա վերլուծության ենթարկել 2025 թվականի ամբողջ տարվա ուղևորահոսքը և հավաքվող ուղեվարձը, որից հետո հնարավոր կլինի սահմանել հստակ ինքնարժեք ու դրա հիման վրա որոշել տրանսպորտի ուղևորափոխադրման արժեքը:

Երևան քաղաքի ավագանու
«Մայր Հայաստան» խմբակցության ղեկավար՝ Մանուկ Սուքիասյան